Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 28-ի գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 11-ի N194-Ա – 218-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1.N198-Ա և N199-Ա որոշումները չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջին, քանի որ որոշումներից պարզ չէ նվիրատվություն որ ՀՈԱԿ-ներին է կատարվել և յուրաքանչյուրին ինչ չափով։

2.N 204-Ա որոշումը չի համապատասխանում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրեքնի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներին, իսկ որոշման 4-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրեքենի 23-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթին։

3.N 206-Ա որոշումը չի համապատասխանում ՀՀ կառավորության 2000 թվականի N656 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 9-րդ կետով սահմանված ժամկետին։

4.N 215-Ա որոշման 3-րդ կետի դրույթների համարակալումը սխալ է կատարված։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 206-Ա, թիվ 207-Ա, թիվ 208-Ա, թիվ 210-Ա, թիվ 212-Ա, թիվ 213-Ա, թիվ 214-Ն և թիվ 216-Ա որոշումների վերաբերյալ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 206-Ա որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջին, համաձայն որի համայնքի ղեկավարը կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցնում է համայնքի ավագանու հետ և ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 10-ը ներկայացնում է համապատասխան մարզպետին:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 11-ի թիվ 207-Ա, թիվ 208-Ա, թիվ 210-Ա, թիվ 212-Ա, թիվ 213-Ա, թիվ 214-Ն և թիվ 216-Ա որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ- ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Է. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Մինասյան